Հայտարարություն Ադրբեջանի կողմից լրագրողներին հերթական անգամ թիրախավորելու առնչությամբ

09 հոկտեմբերի, 2020թ. , Երևան

Երեկ՝ հոկտեմբերի 8-ին, Արցախում կրկին լրագրողներ են վիրավորվել՝ ռուսաստանյան «Сегодня.ру» կայքի գլխավոր խմբագիր Յուրի Կոտենոկը և «Офицеры России» կայքի ու «Красная звезда» թերթի թղթակից Լևոն Արզանովը: Ինչպես և նախորդ օրերին, երբ դարձյալ վիրավորվել էին պատերազմը լուսաբանող լրագրողներ, այս անգամ ևս դեպքը տեղի է ունեցել խաղաղ բնակավայրում՝ Շուշի քաղաքում: Լրագրողները նկարահանում էին Սուրբ Ղազանչեցոց եկեղեցու վրա Ադրբեջանի կողմից առաջին հրթիռակոծման հետևանքները, երբ վրա է հասել երկրորդ նպատակաուղղված հարվածը, որից էլ Լևոն Արզանովը և Յուրի Կոտենոկը ծանր վիրավորում են ստացել: Նրանց տեղափոխել են հիվանդանոց: Բժիշկներին հաջողվել է փրկել ծայրահեղ ծանր վիճակում գտնվող Յուրի Կոտենոկի կյանքը, իսկ Լևոն Արզանովի վիճակը վիրահատությունից հետո գնահատվում է բավարար:

Ավելորդ չէ նշել, որ Սուրբ Ղազանչեցոց եկեղեցին գտնվում է այլ շինություններից մեծ հեռավորության վրա և հրթիռակոծվել է գերճշգրիտ զինատեսակից: Ընդ որում՝ լրագրողները վիրավորվել են ուղիղ հեռարձակում իրականացնելու պահին: Այս փաստերը հերքում են ադբեջանական կողմի պնդումները, որ խաղաղ քաղաքացիական օբյեկտները և լրագրողները հատուկ չեն թիրախավորվում:

Մենք՝ ներքոստորագրյալ կազմակերպություններս.

- վերահաստատում ենք միջազգային հանրությանն ուղղված մեր կոչը՝ խստագույնս դատապարտել Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմում խաղաղ բնակչության, ինչպես նաև մասնագիտական պարտականությունները կատարող ԶԼՄ-ների ներկայացուցիչների դեմ ուղղված ոտնձգությունները,

- պահանջում ենք գործնական քայլեր ձեռնարկել Ժնևյան կոնվենցիան և հումանիտար տարրական նորմերը կոպտորեն խախտող Ադրբեջանի դեմ՝ պատժամիջոցներ կիրառելով այդ երկրի իշխանությունների մարդատյաց գործողությունների համար:

ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ՄԵԴԻԱ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ
ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ – ՀԱՅԱՍՏԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ
«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ» ՀԿ
«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ» ՀԿ
ԳՈՐԻՍԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ